27

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 1-34/24-I/INSTARTS

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան 29 հունվարի 2024թ.

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան (այսուհետ՝ Ակադեմիա), ի դեմս նախագահ Աշոտ Սերոբի Սաղյանի, որը գործում է Ակադեմիայի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ «Արվեստի ինստիտուտ» ՊՈԱԿը (այսուհետ՝ Կազմակերպություն), ի դեմս տնօրեն Աննա Գրիգորի Ասատրյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ Որոշում), «Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Պայմանագրով Ակադեմիան պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեով նախատեսված 214 959 968 ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը, ակնկալվող գիտական արդյունքները՝ դրանց որակական և քանակական ցուցանիշները, նախահաշիվը, կատարողների մասին տեղեկությունները, Ծրագրի առաջադրանքը և օրացուցային պլանը ներկայացված են Պայմանագրի հավելվածներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 Ակադեմիան իրավունք ունի՝

2.1.1 Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի 2.4 կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2 ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3 չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ,

2.1.4 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

2.1.4.1 Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.1.4.2 Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),

2.1.4.3 իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1 Ակադեմիայի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.2 Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,

2.2.3 Ակադեմիայի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3 Ակադեմիան պարտավոր է՝

2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1 Ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2 Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը Ակադեմիա հանձնել սահմանված ժամկետում,

2.4.3 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.4 կատարել Ակադեմիայի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.5 աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել Ակադեմիա,

2.4.6 Ակադեմիա ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում Պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ Հայտ)՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է Պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,

2.4.7 Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից շեղումների դեպքում Ակադեմիա ներկայացնել հիմնավորում,

2.4.8 իրականացնել Ծրագրի շրջանակներում Ակադեմիայի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառում,

2.4.9 Ծրագրի ավարտից հետո Ակադեմիա ներկայացնել միջոցառումների իրականացման մասին տարեկան հաշվետվություն՝ դրան կցելով գիտական ծրագրի հաշվետվության հանձնման-ընդունման արձանագրություն,

2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Ակադեմիայի հնարավորությունը,

2.4.11 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

2.4.12 Պայմանագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2024 թվականի դեկտեմբերի 20-ը:

3. Ծրագրի ֆինանսավորման չափը

Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է 214 959 968 ՀՀ դրամ:

4. Մշտադիտարկում

4.1 Ակադեմիան ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մշտադիտարկում՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:

4.2 Մշտադիտարկումն իրականացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 20.05.2020 թվականի N 638-Ա/2 հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերի և թեմաների մշտադիտարկման կարգի»:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1 Ակադեմիան Կազմակերպությանը վճարումները կատարում է Հայտն ընդունելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2 Ակադեմիան Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

6. Կողմերի պատասխանատվությունը

Կողմերը Պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար կրում են պատասխանատվություն՝ ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում՝ Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն է Կազմակերպության կողմից Ակադեմիա ներկայացված Ծրագրի հայտը:

9.3 Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Ակադեմիա	**Կազմակերպություն**
ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա	ՀՀ ԳԱԱ «Արվեստի ինստիտուտ» ՊՈԱԿ

ք. Երևան, Մ. Բաղրամյան 24 Հ/հ՝ 900011024115 ՀՎՀՀ՝ 00005673 ՀՀ ՖՆ կենտրոնական գանձապետարան	Երևան 0019, Մարշալ Բաղրամյան պողոտա 24/4 Հ/հ՝ 900018005323 ՀՎՀՀ՝ 00008716 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Նախագահ՝ (ստորագրություն)	Կազմակերպության տնօրեն՝ (ստորագրություն)
ԱՇՈՏ ՍԵՐՈԲԻ ՍԱՂՅԱՆ	Աննա Գրիգորի Սաֆարյան
Կ. Տ.	Կ. Տ.
Ծրագրի գիտական ղեկավար՝ (ստորագրություն)	Սաֆարյան Աննա Գրիգորի

Հավելված 1
29 հունվարի 2024թ.
N 1-34/24-I/INSTARTS պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ

Մենք՝ ներքոստորագրյալներս, Ակադեմիայի նախագահ Աշոտ Սերոբի Սաղյանը և Կազմակերպության տնօրեն Աննա Գրիգորի Ասատրյանը, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել 29 հունվարի 2024թ. N 1-34/24-I/INSTARTS պայմանագրով աշխատանքի գնի վերաբերյալ՝ 214 959 968 ՀՀ դրամ գումարի չափով:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

Ակադեմիա

Նախագահ՝

(ստորագրություն)

ԱՇՈՏ ՍԵՐՈԲԻ ՍԱՂՅԱՆ

Կ. Տ.

Կազմակերպություն

տնօրեն՝

(ստորագրություն)

Աննա Գրիգորի Ասատրյան

Կ. Տ.

Հավելված 2
29 հունվարի 2024թ.
N 1-34/24-I/INSTARTS պայմանագրի

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ

«Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի

Ակնկալվող արդյունք	Քանակ
ԱԳ (ազդեցության գործակից) ունեցող պարբերականներում հոդվածներ՝ ըստ «Institute for Scientific Information (ISI JCR)»-ի տվյալների՝	5
ԱԳ չունեցող, բայց Scopus գիտատեղեկատվական շտեմարանում ներառված պարբերականներում հոդվածներ՝	10
ՀՀ ԲՈԿ ցանկում ներառված պարբերականներում հոդվածներ՝	50
Այլ պարբերականներում հոդվածներ/հոդված ժողովածուի մեջ՝	40
Book Citation Index հրատարակիչների ցանկում ներառված հրատարակչություններում հրատարակված մենագրություններ, գրքեր, հոդվածներ՝	1
Գրքեր, մենագրություններ՝	10
Գիտաժողովի նյութեր՝	70
Արտոնագրեր՝	0

Կազմակերպության տնօրեն՝ _____ (ստորագրություն) Աննա Գրիգորի Ասատրյան

Կազմակերպության գիտքարտուղար՝ _____ (ստորագրություն) Քամալյան Մարգարիտա Արսենի

L.S.

Հավելված 3
29 հունվարի 2024թ.
N 1-34/24-Ի/INSTARTS պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ

«Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի

ՀՀ դրամ

Հ/հ	Հոդվածի անվանումը	Ֆինանսավորման չափը	այդ թվում՝			
			1-ին եռամսյակ (20%)	2-րդ եռամսյակ (25%)	3-րդ եռամսյակ (25%)	4-րդ եռամսյակ (30%)
1.	աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը	208 316 100	41 663 220	52 079 025	52 079 025	62 494 830
2.	տնտեսական ծախսեր՝	3 175 000	635 000	793 750	793 750	952 500
3.	այլ ծախսեր՝	3 468 868	693 773	867 217	867 217	1 040 661
Ընդամենը՝		214 959 968	42 991 993	53 739 992	53 739 992	64 487 991

Կազմակերպության տնօրեն՝ _____ (ստորագրություն) Աննա Գրիգորի Ասատրյան

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ _____ (ստորագրություն) Մարգո Սամվելի Մարտիրոսյան

L.S.

Հավելված 3.1
29 հունվարի 2024թ.
N 1-34/24-Ի/INSTARTS պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇՎԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ

ՀՀ դրամ

Հ/հ	Ծախսերի անվանումը	Ֆինանսավորման ծավալը
	Կոմունալ ծառայություններ, այդ թվում՝	**3 175 000**
1.	*էլեկտրաէներգիայի ծառայություն*	1 180 000
2.	*գազի ծառայություն*	1 125 000
3.	*ջրամատակարարման ծառայություն*	145 000
4.	*կապի ծառայություն*	725 000
5.	*աղբահանություն*	0
	Այլ ծախսեր, այդ թվում՝	**3 468 868**
1.	գույք և սարքավորում	420 000
2.	նյութեր	1 650 000
3.	տպագրական ծախսեր	995 000
4.	այլ ծախսեր	403 868

Կազմակերպության տնօրեն՝ (ստորագրություն) Աննա Գրիգորի Ասատրյան

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ (ստորագրություն) Մարգո Սամվելի Մարտիրոսյան

Հավելված 4
29 հունվարի 2024թ.
N 1-34/24-Ի/INSTARTS պայմանագրի

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ
«Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի

A - ամսական աշխատավարձ (ներառյալ հարկերը և այլ պարտադիր վճարները)

B - ամիսների քանակ

C - աշխատաժամանակի ռեժիմ

D - աշխատաժամանակի շաբաթական տևողություն (ժամ)

E - գումարային

ՀՀ դրամ

ազգանուն անուն հայրանուն	պաշտոն	A	B	C	D	E
Վարչասպասարկող անձնակազմ						
Ասատրյան Աննա Գրիգորի	տնօրեն	560 000	12	հիմնական	40	6 720 000
Աղասյան Արարատ Վլադիմիրի	գիտական ղեկավար	250 000	12	ներքին համատեղություն	20	3 000 000
Քամալյան Մարգարիտա Արսենի	գիտքարտուղար	350 000	12	հիմնական	40	4 200 000
Գևորգյան Կարեն Վահանի	տնօրենի տեղակալ ընդհանուր հարցերով	420 000	12	հիմնական	40	5 040 000
Մարտիրոսյան Մարգո Սամվելի	գլխավոր հաշվապահ	420 000	12	հիմնական	40	5 040 000
Մանուկյան Կարինե Վլադիմիրի	անձնակազմի կառավարման ստորաբաժանման ղեկավար	125 000	12	հիմնական	40	1 500 000
Մեկբեկյան Գայանե Գուրգենի	Արվեստաբանական գրադարանի վարիչ	130 000	12	հիմնական	40	1 560 000
Բազինյան Աննա Ռոբերտի	Արվեստաբանական գրադարանի գրադարանավար	125 000	12	հիմնական	40	1 500 000
Միրզոյան Անուշ Վազգենի	մաքրուհի	120 000	12	հիմնական	40	1 440 000
Սիմովնովա Սիրանուշ Հարությունի	ցերեկային պահակ	120 000	12	հիմնական	40	1 440 000
Նուրազյան Գրիգոր Զավենի	գիշերային պահակ	156 000	12	հիմնական	40	1 872 000
Մելքումյան Ալինա Սերյոժայի	Հրատարակչական բաժնի ղեկավար	150 000	12	համատեղություն	20	1 800 000
Գևորգյան Կարեն Վահանի	վարորդ	60 000	12	ներքին համատեղություն	20	720 000
Ստեփանյան Մարինա Գեղամի	տնօրինության փորձագետ	100 000	12	հիմնական	20	1 200 000
Ավագիմովա Ինեսսա Նիկոլայի	ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի կայքէջի համակարգող	150 000	12	հիմնական	40	1 800 000
Արզումանյան Լիլիթ Սևակի	տնօրենի խորհրդական	200 000	12	հիմնական	40	2 400 000
Գուլյանովա Սվետլանա Անտոնի	տնօրինության փորձագետ	200 000	12	հիմնական	40	2 400 000
Գիտական անձնակազմ						
Բաժին Երաժշտության բաժին						
Ասատրյան Աննա Գրիգորի	Ղեկավար	325 000	12	ներքին համատեղություն	20	3 900 000

Արևշատյան Աննա Սենի	Առաջատար գիտաշխատող	420 000	12	հիմնական	40	5 040 000
Երնջակյան Լիլիթ Վարդգեսի	Առաջատար գիտաշխատող	420 000	12	հիմնական	40	5 040 000
Ռուխկյան Մարգարիտա Աշոտի	Առաջատար գիտաշխատող	420 000	12	հիմնական	40	5 040 000
Ամիրաղյան Գայանե Աշոտի	Ավագ գիտաշխատող	300 276	12	հիմնական	40	3 603 312
Արտեմյան Լիլիթ Ռոբերտի	Ավագ գիտաշխատող	300 276	12	հիմնական	40	3 603 312
Շախկուլյան Տաթևիկ Ռաֆայելի	Ավագ գիտաշխատող	150 138	12	համատեղություն	20	1 801 656
Հակոբյան Լիլիթ Վահրամի	Գիտաշխատող	230 168	12	հիմնական	40	2 762 016
Մանուկյան Հովհաննես Կոնստանտինի	Կրտսեր գիտաշխատող	180 000	12	հիմնական	40	2 160 000
Պետրոսյան Արուսյակ Մարկի	Գիտաշխատող	230 168	12	հիմնական	40	2 762 016
Բաժին Թատրոնի բաժին						
Հովհաննիսյան Հենրիկ Վահանի	Ղեկավար	450 000	12	հիմնական	40	5 400 000
Սարգսյան Նազենիկ Գագիկի	Առաջատար գիտաշխատող	420 000	12	հիմնական	40	5 040 000
Ասլիբեկյան Անուշ Գագիկի	Ավագ գիտաշխատող	300 276	12	հիմնական	40	3 603 312
Մարգունի Ռուզան Վաղինակի	Ավագ գիտաշխատող	225 207	12	հիմնական	30	2 702 484
Վանյան Գոռ Կամսարի	Գիտաշխատող	230 168	12	հիմնական	40	2 762 016
Բաժին Կերպարվեստի բաժին						
Ղազարյան Վիգեն Հովհաննեսի	Ղեկավար	225 000	12	հիմնական	20	2 700 000
Դրամբյան Իրինա Ռուբենի	Գլխավոր գիտաշխատող	430 000	12	հիմնական	30	5 160 000
Դոլուխանյան Լորետա Կարենի	Առաջատար գիտաշխատող	320 000	12	հիմնական	30	3 840 000
Ավագյան Արթուր Վարդանի	Ավագ գիտաշխատող	300 276	12	հիմնական	40	3 603 312
Թառայան Զեմֆիրա Ռուբենի	Ավագ գիտաշխատող	300 276	12	հիմնական	40	3 603 312
Ներսիսյան Ալիս Գրիգորի	Ավագ գիտաշխատող	300 276	12	հիմնական	40	3 603 312
Սարյան Ռուզան Լազարի	Ավագ գիտաշխատող	150 138	12	համատեղություն	20	1 801 656
Քոթանջյան Գարեգին Նիկոլայի	Ավագ գիտաշխատող	225 207	12	հիմնական	30	2 702 484
Մանուկյան Սեյրանուշ Սոսի	Ավագ գիտաշխատող	150 138	12	համատեղություն	20	1 801 656
Պողոսյան Գայանե Ռոբերտի	Գիտաշխատող	230 168	12	հիմնական	40	2 762 016
Դևրիկյան Շողակաթ Վարդանի	Կրտսեր գիտաշխատող	90 000	12	հիմնական	20	1 080 000
Բաժին Ճարտարապետության բաժին						
Հասրաթյան Մուրադ Մարգարի	Ղեկավար	420 000	12	հիմնական	30	5 040 000
Տեր-Մինասյան Անուշ Աշոտի	Ավագ գիտաշխատող	150 138	12	համատեղություն	20	1 801 656
Հասրաթյան Արեգ Մուրադի	Ավագ գիտաշխատող	150 138	12	հիմնական	20	1 801 656
Ղուլյան Արտակ Բենիկի	Ավագ գիտաշխատող	225 207	12	հիմնական	30	2 702 484
Հովսեփյան Հրանտ Աշոտի	Գիտաշխատող	115 084	12	համատեղություն	20	1 381 008
Ջալալյան Ալեքսանդր Սերգեյի	Գիտաշխատող	172 626	12	հիմնական	30	2 071 512
Բաժին Սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժին						

Աղասյան Արարատ Վլադիմիրի	Ղեկավար	550 000	12	ներքին համատեղություն	20	6 600 000
Քերթմենջյան Դավիթ Գրիգորի	Առաջատար գիտաշխատող	210 000	12	համատեղություն	20	2 520 000
Բեքարյան Անահիտ Արայի	Ավագ գիտաշխատող	300 276	12	հիմնական	40	3 603 312
Զաքարյան Անուշավան Հազարապետի	Ավագ գիտաշխատող	150 138	12	համատեղություն	20	1 801 656
Կիրակոսյան Մերի Արայի	Ավագ գիտաշխատող	300 276	12	հիմնական	40	3 603 312
Համբարձումով Արսեն Լևոնի	Ավագ գիտաշխատող	300 276	12	հիմնական	40	3 603 312
Հարությունյան Մարտին Վարդանի	Ավագ գիտաշխատող	300 276	12	հիմնական	40	3 603 312
Հովսեփյան Գալուստ Սերգեյի	Ավագ գիտաշխատող	225 207	12	հիմնական	30	2 702 484
Մկրտչյան Մանե Գառնիկի	Ավագ գիտաշխատող	150 138	12	համատեղություն	20	1 801 656
Չթյան Անահիտ Գուրգենի	Ավագ գիտաշխատող	300 276	12	հիմնական	40	3 603 312
Ամիրջանյան Լիլիթ Լիպարիտի	Կրտսեր գիտաշխատող	180 000	12	հիմնական	40	2 160 000
Մարդոյան Լուսինե Աշոտի	Կրտսեր գիտաշխատող	90 000	12	համատեղություն	20	1 080 000
Պետրոսյան Արմինե Խաչատուրի	Կրտսեր գիտաշխատող	90 000	12	համատեղություն	20	1 080 000
Քամալյան Մարգարիտա Արսենի	Ավագ գիտաշխատող	75 069	12	ներքին համատեղություն	10	900 828
Բուլության Վարդուհի Հարությունի	Գիտաշխատող	115 084	12	հիմնական	20	1 381 008
Բաժին Ժողովրդական երաժշտության բաժին						
Նավոյան Միեր Ռաֆիկի	Առաջատար գիտաշխատող	450 000	12	հիմնական	40	5 400 000
Բաղդասարյան Անահիտ Հովհաննեսի	Ավագ գիտաշխատող	150 138	12	համատեղություն	20	1 801 656
Պիկիչյան Հռիփսիմե Վահրամի	Ավագ գիտաշխատող	150 138	12	համատեղություն	20	1 801 656
Տիգրանյան Մարիաննա Ալբերտի	Ավագ գիտաշխատող	300 276	12	հիմնական	40	3 603 312
Հակոբյան Անի Սարգսի	Գիտաշխատող	230 168	12	հիմնական	40	2 762 016
Մեհրաբյան Ժաստենա Խաչատուրի	Գիտաշխատող	150 138	12	հիմնական	20	1 801 656
Սարգսյան Մարգարիտ Իշխանի	Գիտաշխատող	115 084	12	համատեղություն	20	1 381 008
Հովհաննիսյան Կարինե Աբելի	Կրտսեր գիտաշխատող	90 000	12	համատեղություն	20	1 080 000
Խումբ Արվեստի սոցիոլոգիայի գիտական խումբ						
Սահակյան Արմեն Կոլյայի	Ավագ գիտաշխատող	150 138	12	համատեղություն	20	1 801 656
Աշխատավարձային ֆոնդի մնացորդ՝						530760
Ընդհանուր գումար՝						208 316 100

Կազմակերպության տնօրեն՝ (ստորագրություն) Աննա Գրիգորի Ասատրյան

Կազմակերպության անձնակազմի կառավարման ստորաբաժանման ղեկավար՝ (ստորագրություն) (Անուն)

Կ.Տ.

Հավելված N 6
«29» հունվարի 2024 թ.
N 1-34/24-1/INSTARTS պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ *

«Հայ արվեստի համալիր ուսումնասիրությունը» ծրագրի
(ծրագրի անվանումը)

h/h	Իրականացվելիք միջոցառման			
	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	կատարման ժամկետները
1.	Նյութերի հավաքում	աշխատանք գրադարաններում, արխիվներում, թանգարաններում	գիտական հոդվածներ, մենագրություններ, զեկուցումներ գիտաժողովներում	31.03.2024
2.	Նյութերի հավաքում	աշխատանք գրադարաններում, արխիվներում, թանգարաններում	գիտական հոդվածներ, մենագրություններ, զեկուցումներ գիտաժողովներում	30.06.2024
3.	Նյութերի հավաքում	աշխատանք գրադարաններում, արխիվներում, թանգարաններում	գիտական հոդվածներ, մենագրություններ, զեկուցումներ գիտաժողովներում	30.09.2024
4.	Նյութերի հավաքում	աշխատանք գրադարաններում, արխիվներում, թանգարաններում	գիտական հոդվածներ, մենագրություններ, զեկուցումներ գիտաժողովներում	30.12.2024

ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի տնօրեն՝ _____ (Աննա ԱՍԱՏՐՅԱՆ)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Ծրագրի գիտական ղեկավար՝ _____ (Աննա ԱՍԱՏՐՅԱՆ)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

---

* *Իրականացվելիք միջոցառումները ներկայացնել եռամյակային փուլերով:*